

գասեր Տ. Ստեփան Մաշտոցեան համարուի, որ մինեւ-
ցայժմ իսկ եկեղեցւանորեան պաշտօնն ալ ինքը կկատարէ :
Վերոյիշեալ տաճարին հիմնարկութիւնը դեռ չսկսած՝ այս
մեծարդին Եւնիք երոպայի եւ Ասիոյ այլ եւ այլ երեսի
քաղաքները պտրտեցաւ, այն կողմերու գեղեցիկագոյն եկեղե-
ցեաց գաղափարներն առաւ, շինութեան, մասնաւոր գար-
դերու, ամենեւն հարկաւոր նիւթերը ժողովեց, մարմարիոնե-
սեմեր, արձանագրութեանց համար տախտակներ եւ ուրիշ
պիտանի նիւթեր, Կոստանդնուպոլսէն եւ յայնուտեք բերել
տուաւ, եւ Իտալիայէն սրբոց գերագանց պատկերներ, եւ այլն :
Այն հաւաքած գաղափարներէն յետագայ ստորագրելի արեւե-
լախառն եւ ազգային ոճով շինուած եկեղեցւոյն գեղեցիկ
ձեւը յարմարցուց : Շինութեան ծախքն մինչեւ հիմայ մեծա-
սան հազար ոսկիի էրաւ : Ամբողջ շէնքը լինեցած է. միայն
ներսի դին դեռ բմը կայ շինելու, պատերը նկարելու եւ այլ
զարդարանքներ անելընելու :

Արդ այս նորակերտ եւ շքեղաշուք տաճարը (որ արժանա-
պէս կրնայ ուխտատեղի եւս բռնիլ), հիմնեցաւ յանուն սրբոց
Հրեշտակապետաց Գարբիելի եւ Միքայելի. գրեթէ Պաքովու
մէջտեղը պայծառ եւ քնարձակ տեղի մը վրայ շինուած՝ վե-
հափառ դիպոյի մը պէս բոլոր քաղաքին վրայ կտիրէ եւ ամե-
նայն բարեպաշտից եւ անբարեպաշտից անգամ սիրտը կյան-
կուցանէ :

Այս մեծագործ շէնքը երկու բարձրագեղ զանգակատուն
ունի արեւմտեան կողմը, յորոց մէկուն վրայ ժամացոյց եւս
պիտի դրուի : Նոյնպէս ետք ծառագայրազարդ խաչ ունի
որը մէջմէկ ոսկեճաճանց պղնձէ գնդի վրայ կկայնին, եւ յորոց
երկուքը՝ երկու զանգակատանց վրայ են տնկած, մէկը կարո-
ղիկէին վրայ եւ չորսը ձակատանն զազարը : Ամբողջ շէնքին
ծածքը ճերմակ երկար է : Այս տաճարը կարողիկէ մը ունի
արեւելեան կողմը, բնմին առջեւը, եւս եւ երկու պահարան
դիմացէ դիմաց եւ գաւիթ մի : Արեւելեան դրսի կողմի ձա-
կատը խաչ մի կայ եւ տակը ոսկեճաճանց մի գեղեցիկ, ասոր
տակն եւս հաւասարակարգ սիւներ : Նոյնպէս արեւմտեան
կողմի զազարը խաչ կայ եւ անոր տակն մարմարիոնէ տախ-
տակ մի, որուն վրայ նկարագրեալ կայ էնն Աստուած եւ յե-
տագայ արձանագրութիւնը :

- « Յանուն էին բարձրելոյ կանգնի այս արձան »
- « Ազնիւ Գլխաւոր իշխանէ Կարապետէ Բաշկեան, »
- « Ընդ իւր Տիկնոջ Մարիամայ իշխատակ անվախճան » :

Այս արձանագրութեան վար Հրեշտակապետաց քանդա-
կեալ արձանները կան ոսկեգօծ, դարձեալ մարմարիոնի վրայ
խիստ գեղեցիկ կերպով փորուած, եւ ունին իշխատակարան
գրեալ այսպէս .

- « Քեղոքոս ազնիւ սերունդ Սողոմոնեան, »
- « Եւ բարեւոր յարգի Տօնիկ Սիմոնեան, »
- « Չորս եւ իշխան Տէր Սարգսովը յանգինջ մատենան, »
- « Եւ հրեշտակօք պատրասարեան միշտ անսասան » :

Ասոր տակն եւս եկեղեցւոյ արձանագիրը կայ մարմարիոնի
վրայ, հայերէն եւ յունարէն լեզուօք դրոշմեալ ոսկեգօծ.

- « Կառուցաւ Պաքովու սուրբ եկեղեցիս յանուն սուրբ »
- « Հրեշտակապետաց Միքայելի եւ Գարբիելի, իրազում քրիս- »
- « տոնեալ ազգաց բարեպաշտից, եւ հոգարարձութեամբ Ստե- »
- « փան Մատթեոսի Շահնեան, Միքայել Բարսիկ Մորեան, »
- « Յակոբ Սմբատեան եւ Դաւիթ Աստուածամտեան, որոց »
- « ամենեցուն Տէր վարձս բարեաց քնկայցի, 1850 » :

Հիսիսային կողմի մատուան ձակատը խաչ մի կայ,
եւ տակը մարմարիոնի վրայ ակն Աստուծոյ նկարագրած,
որուն վրայ այսպէս գրած է .

- « Ջնուիրատու անքուն աշոյղ ըզՄարտիրոս Մանուկեան »
- « Յիշեն ով Տէր ողորմութեամբ աստ եւ իկեանս անվախճան » :
- « Հարաւային մատուան ձակատին վրայ եւս խաչ եւ ակն Աս- »
- « տուծոյ կայ, որուն տակը վերինին բոլորովին նման արձա- »
- « նագրութիւն կայ (բաց ինուիրողին անունէն որ կտարբերի) . »
- « Եւ է այս . »

- « Ջնուիրատու անքուն աշոյղ ըզՄարտիրոս Ջատիկեան »
- « Յիշեն ով Տէր ողորմութեամբ աստ եւ իկեանս անվախճան » :
- « Այս մատուան դրան վերի սեմին մարմարիոն քարի վրայ »
- « հետեւեալ արձանագիրը կկարդացուի զորացի ոսկեգօծ գրով. »

ՀԻՄՆԵՍԻԱՆ ՍՈՒՐԲ ՏԱՃԱՐՍ

Ի ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՒՐԲԱՆԻ ՀԱՅՈՑ ԵՋՄԱՒԱՐԻ

ՏԱՃԱՐԸ ՏԱՃԱՐԸ ՆԵՐՍԻՍԻ ԿԱՌԱՂԻԿՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆԸ

ՏԱՃԱՐԸ ՏԱՃԱՐԸ ՄԱՏԹԷՍԻ ԱՐԵՊԻՍԿՈՒԳՈՍԻ

Ի ՌՈՒՆԻ ՀԱՅՈՑ ԹՄԷԷ :

Եկեղեցւոյ ներսի արեւմտեան դրան կամարին վրայ գրեալ է .
« Այս է պատուիրան իմ, սիրեցիք զմիմեանս » : Եւս եւրե-
մին կամարին վրայ . « Փառաց տաճար աստուածային կանգ-
նեալ յանուն Ամենաիրկիւնի » :

Նոյնպէս եւ սեղանին նորիցոնին վրայ . « Եթէ որ զիս պաշ-
տիցէ, պատուեսցէ զնա Հայրն իմ » : Իսկ հիսիսային պանա-
րանին մէջ առագանին արձանագիրն է .

- « Հոգեւոր ծնունդք յայսմ առագանի »
- « Յիշեսցեն համբաւս իշխատակի »
- « Չգրիգոր Մեղաքսեան Պորոշանցի »
- « Եւ զիւր կենակից Տիկնն Վարդենի » :

Եկեղեցւոյ բնմին վրայ երեք սեղան, այսինքն մէջտեղը
Սուրբ Աստուածածին, վերի կողմը Սուրբ Գրիգոր Լուսաւո-
րիչ եւ վարի կողմը Սուրբ Յակովբ : Պանարանին սեղանին
վրայ սրբոյն Յովնաննու. Մկրտի պատկերը կայ, իսկ գաւիթի
սեղանին վրայ՝ սրբոյն Ստեփանոսի նախաձկայինը :

Բնմին ձակատը յոյժ գեղեցիկ է, եւ վրան ոսկեգօծ փո-
րուածքներ կան քարէ : Տիկնանց վարի կայարանը՝ ինչպէս
նաեւ իրենց վերնատունը՝ քնարձակ եւ գեղեցիկ է : Կերեզ-
մանոցը եկեղեցւոյ պարտիզին մէջն է :

Եկեղեցւոյ շինուած տեղաւոյ շրջական Հայոց քաղ կըսուի,
որովհետեւ անոր շուրջ դին Հայոց գերդաստաններ կրեակին,
որ հօտի մը պէս իրենց Աստուածաբնակ ապաստանարանին
չորս կողմը իրեն պար առեալ՝ անոր սուրբ հովանաւորու-
րեանը կկայնեն :

Այս տաճարին բակին մէջ մանչ տղոց համար նորակառոյց
վարժարան մի եւս կայ, որ այժմեան ժողովրդեան միջակ
բուռոյ համեմատ՝ մէջը առ այժմ բաւական ուսանողք կգտնե-
ին : Յուսարի է որ Հայկազն բարեպաշտ ժողովրդեան հետ-
գնեալ անոր բազմանալովը եկեղեցին եւս տակաւ տակաւ
իրեն սեպհական կալուածներ ստանայ : Արդէն վարսին մօտ
հայազգի գերդաստաններ կգտնուին Պաքով, որ շատր Թո-
մանէն, Պորոշանէն եւ այլ քաղաքներէն քաշուեր են հոն,
եւ գրեթէ ամենքեան ունին իրենց սեպհական հանգիստ եւ
գեղեցիկ բնակարաններ : Ամենքեան բնտի վաճառականք,
(որ մեր ազգին բնական կատարելութիւնն է) եւ որ մեծն
եւ գովելին եւս է՝ ամենքեան խաղաղասէր, ամենքեան հա-
մախտ եւ ամենքեան համարան են :

Որովհետեւ արդէն խօսքերնիս Պաքովու վրայ է՝ տանք
գէր հակիրճ բանիւք այս քաղաքիս ստորագրութիւնն ալ :
Տափարակ դաշտի մը վրայ շինուած՝ միջակ մեծութեամբ քա-
ղաք մըն է Պաքով, եւ ոչ այնչափ իւր գեղեցիկ դիրքը եւ
նորանաւորեանը համար անուանի է, որպիս իւր վաճառա-
շահութեանը համար : Ընդհանրապէս ամեն փողոցներն քն-
դարձակ, երկայն եւ կանոնաւոր գծի վրայ են քաշած : Հին
տներն երբայով կքանդուին եւ հնագնեալ նոր ոճով քնակա-
րաններ կբազմանան : Պաքով քաղաքը չորս կողմը պտղա-
բեր հովիտներով պատած եւ Պիաղիճաւ, Սիւրբ ու Դրոդոշ
բազմաճեղեան գետերուն յորդառատ ջրերովն ոռոգած է : Մեծ
առեւտուր կըլլուի հոն մայր փայտէ, որ լատարով մերձա-
կայ վերանց ստորոտէն մինչեւ Կապան եւ այլուր կտարուի :

Կերպարոյ Տէր, իրեն վերջին քայց եւ կարեւոր բնկիւք մըն
ալ ունիմ, զոր նոյնպէս կփութամ անաճանցանէլ սրտբանդ :

Արդէն իսկ քաջամեծ է Չեղ Առաքելաշնորհ Տէր Սարգիս
Սրբազան Արքեպիսկոպոսն Առաջնորդն Անդրիանապօլսոյ,
եւս եւ արժանընտիր յարակից եւ հոգեծին որդի նորին,
Կերպարուի Տէր Մեսրոպով Վարդապետն, որոց քերականի
գալուստն յայտնի կողմանս (ի Հոկտեմբեր ամսեան անցելուն
ամիս) արդէն Պորոշանու Ազգային Վարժարանին Տարգի
Ուսուցչապետ եւ իմ ազնուագոյն բարեկամն Պ. Տարուրեան
Յակովբեան գեղեցիկ գրութեամբ մի մասնաւորապէս ծանու-
ցեր է Կեր. Սուրբ Հօր, զոր Սրբութիւն Չեղ բարեհաճեցայք
հրատարակել պատուական Աւետարել Աղանայն միջոցաւ :

Արդ եւս շնորհապարտ սրտի կծանուցանեմ Չեղ Սրբու-
րեանը որ Սարգիս Սրբազանը մեզ Մոլտաւարեակ Հայկա-
զանցս բոլոր իրեն ըրած հոգեւոր այցելութեան ժամանակը (որ
տարի մը ամբողջ տեւեց) ոչ սակաւ հոգեւոր նակողութիւններ
եւ կրօնական բարեկարգութիւններ բրաւմեցի : Հինգ Բանանայ
ձեռնադրեց մեզ Սրբազանը. հաւանգիս այլ եւ այլ քաղաքաց
մերազնեցից համար, ինչպէս իմալարաքաղաքս եւաշ, ի Պորո-
շան, ի Ռօման, ի Յօքլան եւ ի Պաքով : Բայց ամսոս որ եւս
շարեակ ազգայինքս բաղդ բռնեցանք Սրբազանին մեզի
նուիրած նորընծայ երանելի նովիւր եւ ոչ ամբողջ տարի մը
գոնէ վաճելու, վասն զի անցելոյ նոյններէր 28ին
դժման եւ սեւաքոյր մամն անակնկալ կեաւ եւ յա-
փշտակեաց զնա իմիջոյ մերմէ, բոլորով զիւր նորոգ ստա-
ցած հօտը արտասուալից աղւորներով, եւ որ աղեւապին է՝
ամուսին մի հինգ գեւարուակի որբերով (որք այժմ ազգային
հոգարարձութեան խնամակալութեամբ տակ կկայնին) : Մեծ
է արդարեւ այս մեր ըրած կորուստը, վասն զի սրբա-
կրօն նեցեցեալը (որոյ քանանալութեան անունն էր Կարա-
պետ) իւր մատաղ հասակէն իմը միշտ դպրութեան պաշ-
տօնը անարատ վարքով մը զարմանալի ճշդութեամբ եւ
յաշդողութեամբ կատարելով, քաջ եկեղեցականի մը ամեն
կատարելութիւնները ստացեր, ուստի եւ արժանապէս այս

սուրբ կարգն ընդունել էր, ուստի եւ մեծ ակնկալութեանց կմնայինք այնպիսի քաջամարտ եկեղեցականէ մը :

Գեր. Սարգիս սրբազանին մեզի բրած ամենէն երեսնէի եւ մեծամաստակ գործն է անշուշտ Պարօվու նորակառոյց եկեղեցւոյ մեծամանդէս օծումը, որոյ նման վաստակ գուցէ կալաց եւս պիտի ունենայ յառաջիկայ զարնան, ինչ նոր շինելու եկեղեցւոյն օծմանը ատեն . (1) : Ուստի բազմերախտ Սրբազանին եւ իւր ուղեկից հոգեզգօն Վարդապետին երախտիքը դրոշմուելով խիտրա համօրէն շնորհապարտ ազգայնոցս քաղցր իշխատակաւ անտարակոյս անմոռաց պիտի մնայ :

Գերջարգոյ Տէր եւ Հայր սուրբ, շնորհաբաւական շնորհակալ ըլլալ Ձեր սրբութեան որ եւ եաշու ազգային վարժարանիս տարեկան քննութեան վրայ Ձեզի խրկած ճշման տեղեկութեան բարենաճեցալք խիտլ արձանագրել սիրուն Աղաւնոյն բերբերուն մէջ : Ուստի անտարակոյս եմ որ Ձեր Սրբութեան միջնորդութեամբը բարեսէր Աղաւնին այս կարեւորագոյն սեպուած աշխատանքիս ալ (գոր եւ պատուաւոր ազգայինք ոմանք զիս յորդորեցին տողել) եւս առաւել քաղցր պատասխարան մը պիտի շնորհէ իւր գողտրիկ բեւին գոնեա մէկ անկիւնը . որոյ վասն իմ երախտապարտ շնորհակալութեանս կփութարմ առաջուց մատուցանել Ձեր Սրբութեանը :

Թէ որ այս գրուածն բաղդ ունենայ իւր նպատակին հասնելու՝ կխնդրեմ զՍրբութեան Ձեր որ բարենաճիք, եթէ իցէ հնար, զըմբանդակն մէկ յողութեմի միայն վերածել, այսինքն՝ առանց ուրիշ անգամի մնացորդ բողոյս (թէ եւ գուցէ քիչ մը երկար երեսնայ), խնդրեմ եւս որ եթէ կարելի ըլլար այս վերջին ամսոյս բերբին մէջ սեղմիք որ առաւել բուշանար : Վերջապէս՝ որ բերբին մէջ է՝ որ ըլլայ՝ շնորհք կրնէք անկէ տասն օրինակ մը առելի դրկելու առ Յարգի Գործակալն Սրբութեան Ձերում, Գարագաշեան Տ. Յովնան, ուսկից անոնց ծախքն ինչ որ ըլլայ պիտի ընդունիք շնորհակալութեամբ, վասն զի վերոյիշեալ Մատթեոսեան Տէր Ստեփան մասնաւորապէս խնդրեց յինն որ զրեմ Ձեր Սրբութեանը այս բանիս համար :

Կերպատիւ եւ շնորհագարդ Տէր, աւարտելով ուր ուրեմն գայս երկար գրութիւն իմ, կփութարմ գառաջիկայ սուրբ եւ հրաշալի օրերն ալ Ձեր Սրբութեանը եւս եւ միւս Գեր. Վարդապետացն, Ալեգարդ եւ շնորհավայ Տեառն Սարգսի, եւ Պերճիմաստ հարազատին Ձերում երանաշնորհ Տեառն Խորենայ՝ միծալ խնդրեմք շնորհաւորել եւ մաղբել որ Բազմերախտ Տեառնը ամենայն բարի նկատմունքներն ըստ Ձեր փափաքանցը անյապաղ իկատարումն ելցեն, եւ միանգամայն բոլոր շնորհապարտ սրտերուն հետ միատեղ ինքրածին Փրկչէն որ Ձեզ երկար եւ բարեբաւտիկ օրեր շնորհէ, որպէս զի անտարակոյս ազգս մեր բախտ ունենայ անձնանուէր եւ երանելի Նահատակացոյ անհամար երախտիքը շատ տարի դեռ վաշելու :

Ընդունեցէք խնդրեմ եւ իմ Ծնողաց եւ Հօրեղբօրս անկեղծ մաղբաւքները եւ գլխունարնական համբոյց օրհնեալ աջոյ Գեր. Հարցոյ Սրբոց, որով մնամ խորին մեծաբանօք

Ամենախոնարհ եւ երախտապարտ ծառայ եւ աշակերտ

ՍՈՂՈՄՈՆ ԳՐԱՆԽՈՂԵԱՆՅ Սևասր.

Եաշ 17 Գեկտեմբերի 1858 :

Տ. ՄԵՍՐՈՎԻ Գ. ԹԱՂԱԳԵԱՆ.— Արշալուսէն կիմանամք որ Տ. Մեսրօփ Դաւիթ Թաղիարեան ազգասէր անձը այս տարւան յունիսի 10ին Շիրազ քաղաքին մէջ վախճանել է 56 տարւան : Ծնեալ էր նա ի Կորրի որ յերեսան, ու սուրբ Արծող իւր կրթութիւնը առած, ուր եւ ձեռնադրեցաւ սարկաւազ : Անկէց անցաւ 1825ին ի Հնդկիս, ու Կալկարայի անգղիական համալսարանին մէջ լմնցուց զիւր ուսումը, եւ Ձուդայի մէջ երկար ատեն վարժապետութիւն ըրաւ . 1845ին Արարատեան բնկերութեան օժանդակելովը Կալկարայի մէջ Ազգասէր անունով լրագիր մը սկսաւ հրատարակել, զոր եւ առաջ տարաւ մինչեւ ի 1852 անխոնջ աշխատութեամբ : Բայց

իւր ջանիցը արգասիք են նաեւ այն եօրը տարւան մէջ հրատարակած Այբբենարան. ճառ ի Դաստիարակութիւն օրիորդաց, ճանապարհորդութիւն ի Հայս, Պատմութիւն Պարսից. Առակք Պարսից. Սօս եւ Սօնդիպի, Վարսենիկ, Համառօտ քերականութիւն : Ունի նաեւ բարգմանած Գրոտիոսի ճշմարտութիւն քրիստոնեական հաւատոյ գործը, Դիցարանութիւն, Պաղեստին, եւ Պատմութիւն ինչ Հնդկաստանի : Ունիք դեռ մէկքանի գրուածներ ալ զորս մանր վրայ հասնելով՝ չկրցաւ իրոյս ընծայել : Այսպիսի պատուական անձի մը կորուստը ցաւալի է արդարեւ բոլոր ազգասիրաց :

ԱՊՐՈՅԵԱՆ ՍԱՀԱԿ ԷՖԷՆՏԻ.— Զմխառնացի Ապրօյեան Սահակ Էֆենտին, որ Բարձրագոյն Դրան գաղղիարեն բարակցութեան զբաղման զլխաւորն է, Պէյճիքայի եւ Հոլանտայի տեղութեանց յարգական յատուկ ուշադրութեանցը արժանի եղաւ : Բանզի այս տեղութեանց առաջինը Լեորոտի կարգին հրամանատարութեան, եւ երկրորդը Լիւքսեմպուրի կարգին հրամանատարութեան շքանշանը յուղարկեցին յիշեալ պաշտօնատարին :

(Արշալուստ)

Տ. ԱՐԵՏԻԲ ԷՆՖԻՆՏԵԱՆՅ.— Պատուաւոր եւ գործունեայ զբաղմանուն ի Տիփիսիս, որ ազնիւ բարեսիրութեամբ Աղաւնոյս հոգն ու գործակալութիւնը յանձն առած է եւ յառաջ վարէ ազգասէր փութով, այսպէս կզրէր իւր վերջըներեւամակին մէջ .

... Տաղք եւ երաժշտական երգք Տեառն Խորենայ ջնաշխարհիկ Քերրոզ վարդապետին մեծ ազդեցութիւն արարին իմիտս ուսումնականաց եւ ուսումնասիրաց մերոց եւ ազգասիրաց, եւ անա մին ինոցանէ գիտնական Տ. Նիկողայոս Տէր Շմառնեանց ինամակի իւրում առ իս այսպէս ձայնարկէ ի հնոյն Կողբիսայ, ի քաղաքէն Քուրայիսայ, ուր կայ նա յարքունի ծառայութեան—

« Խեղճ Խորեն վարդապետն չգիտէր թէ նորա տաղք զիս այնքուն պանպանեն զբոլոր զիշերն, եւ չիք վայրկեան՝ յորում հառաջանօք չկրկնեմ . Ա՛հ Հայաստան, Հայաստան, երանի քեզ Հայաստան, որ քո ցաւոց եւ վշտաց ունիս քերրոջ եւ երգիչ զմերս Խորեն Խորխոռունի : Զգիտե՛ Վարդապետն, որ նորա անունն իտախտակի սրտի իւրաքանչիւր Հայկազնոյ զժազրեալ կայ.....» :

Շատք եւս տակաւին անձանօք են ձրից եւ տաղանդաց Խորենայ վարդապետի, ըստ որում դեռ եւս ջնախն ի ձեռն ուղղաւ ամսաբերքք ձեր, զի ընրերցեալ սիրահարեցին ընդ Հազներգուն գերապանձ : Եւ ստացայ ի Պօլսոյ գերկուս օրինակ Մասեաց Աղաւնոյդ եւ տամ ուսումնականաց որոճալ զնոսին վերձանութեամբ, որք ձանօրանան եւս եւ ի Բազմալիս օրագրէն Վենետիկոյ անցեալ ամաց, որք լի են սքանչելի բանաստեղծութեամբք եղբօրդ հարազատի Խորենայ Քերրոզ Վարդապետին Հայկազանց..... :

(1) Մինչեւ հիմա Կալսցը եղած ազգային փայտաշէն եւ միակ եկեղեցւոյն հիւրերը սասնիկ հինգած ըլլալով՝ այժմ անոր տեղը այլ իմն նոր կշիւնի քարէ :